Baker Tilly Armenia CJSC
22 Hanrapetutyan Street
0010 Yerevan, Republic of Armenia
Tel: +374(10) 544-301
Tel: +374(10) 544-307/309
Fax: +374(10) 562-404
Email: info@bakertillyarmenia.com
www.bakertilly.am

.

№ 10
04 մարտի 2022 թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ
ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մովսիսյան,

2022 թ. հունվարի 27-ին ձեր ստորագրությամբ՝ ծանուցում-պարզաբանում հիշեցնող ակնհայտ անհիմն նույնաբովանդակ գրություններ են ուղարկվել բազմաթիվ իրավաբանական անձանց պատասխանատուների: Այդ, այսպես կոչված ծանուցում-պարզաբանումներում, ըստ էության, ստանձնելով իրավասու հանրային իշխանության մարմնի սահմանադրաիրավական դեր և հընթացս շրջանցելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի պահանջները, արձանագրել եք իբր օրենքից բխող պարզաբանումներ, որոնք որևէ աղերս չունեն հասարակական միավորման իրավունքների շրջանակի հետ:

Մենք չէինք անդրադառնա ձեր գրառումներին, եթե դրանք անմիջականորեն առնչություն չունենային մեր ընկերության բնականոն գործունեության բացահայտ խաթարման, ապօրինի միջամտությամբ մեծ չափերի հասնող վնաս պատճառելու հետ:

Հիշյալ գրությունները բովանդակում են յուրովի վերախմբագրված հղումներ՝ առնվազն 3 օրենսդրական ակտերին, մասնավորապես, «Հաշվապահական հաշվառման մասին», «Աուդիտորական գործունեության մասին» և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքների մի շարք հոդվածներին : Ավելին՝ դրանց շարադրանքից հետո անմիջապես կատեգորիկ եզրահանգումներ եք հրամցրել վերը նշված իրավաբանական անձանց, ըստ որոնց՝ իբր հստակեցվել է աուդիտորական գործունեություն իրականացնող կազմակերպությունների ստույգ շրջանակը. «Ստորև Ձեզ է ներկայացվում Պալատի անդամ աուդիտորական կազմակերպությունների ցանկը, միայն որոնք իրավունք ունեն ՀՀ-ում մատուցել աուդիտորական ծառայություններ»: Գրությանը կից փոխանցել եք պալատի ռեեստրում գրանցված աուդիտորական կազմակերպությունների ցանկը, ընդ որում,

ձեր կատեգորիկ եզրակացության համաձայն՝ միայն վերջիններս են իրավասու իրականացնել աուդիտորական գործունեություն:

Այն, որ վերը նշված օրենքների առանձին հոդվածների վրա հղումները յուրովի խմբագրությամբ են ներկայացված և այդպիսով հարմարեցված են ձեր այն ակնկալվող պարզաբանմանը, որ աուդիտորական գործունեություն, գլխավոր հաշվապահի աշխատանք կարող են իրականացնել իբրև թե «**միայն պալատի անդամները**», հավաստվում է, օրինակ՝ ձեր հետևյալ հղումով. «Տեղեկացնում եմ նաև, որ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող խոշոր ու միջին կազմակերպություններում գլխավոր հաշվապահ կարող են աշխատել միայն Պալատի անդամները (փորձագետ հաշվապահ կամ աուդիտոր)»: Մինչդեռ՝ ձեր նշած «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով ամրագրված է բոլորովին այլ իրավական նորմ. «Հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունում, խոշոր կազմակերպությունում և միջին կազմակերպությունում գլխավոր հաշվապահ կարող են աշխատել միայն փորձագետ հաշվապահները և աուդիտորները: Այն դեպքում, երբ հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունում, խոշոր կազմակերպությունում և միջին կազմակերպությունում հաշվապահական հաշվառումը վարում է մասնագիտացված կազմակերպությունը, ապա վերջինիս կողմից գլխավոր հաշվապահի գործառույթներն իրականացնող լիազորված անձը ևս պետք է լինի փորձագետ հաշվապահ կամ աուդիտոր»: Բնորոշ է այն, որ ոչ միայն ողջ օրենքի տեքստում, այլև հիշյալ 10-րդ հոդվածում ընդհանրապես բացակայում է «պալատ» տերմինը: Այն, որ փորձագետ հաշվապահը մասնագիտացված կառույցի անդամ հանդիսացող ֆիզիկական անձ է, ամրագրված է բոլորովին այլ՝ 3-րդ հոդվածում, ուստի ճշգրիտ լինելու համար հարկ էր հղում անել նաև այդ հոդվածի վրա:

Թերևս, նաև վերը նշված հանգամանքների, մասնավորապես՝ թյուրըմբռնումների, սուբյեկտիվ ընկալումների և շահերի բախման համատեքստում անաչառության անհնարինության հաշվառմամբ է, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով հետևանք առաջացնող պարզաբանումներ տալու իրավասությունը վերապահվում է ոչ թե հասարակական միավորումներին կամ այլ իրավաբանական անձանց, այլ բացառապես հանրային իշխանության մարմիններին. «Օրենսդրական ակտի (բացառությամբ Սահմանադրության) և Կառավարության որոշման վերաբերյալ պաշտոնական պարզաբանում կարող է տալ ակտը կիրառող պետական կառավարման համակարգի մարմինը, բացառությամբ հարկային և մաքսային հարաբերություններ կարգավորող օրենսդրական ակտի կամ Կառավարության որոշման վերաբերյալ պաշտոնական պարզաբանումների, որոնք տրամադրում է Կառավարության կողմից լիազորված՝ ֆինանսական բնագավառում

պետական կարգավորում իրականացնող պետական մարմինը՝ իր սահմանած կարգով» (42-րդ հոդվածի 2-րդ մաս):

Մեկ տարուց ավելի է, որ նախաձեռնել ենք դատական գործընթաց Ֆինանսների նախարարության դեմ, որը դարձյալ ղեկավարվելով «Աուդիտորական կազմակերպության մասին» ՀՀ օրենքով, ինչը մեր ընկալմամբ անկիայտ հակասահմանադրական է, փորձել է իրականացնել մեր գործունեությունը սահմանափակող վարչարարություն: Ի դեպ, մենք նաև պաշտոնական գրագրություններում, այդ թվում՝ հիշյալ օրենքի սահմանադրականության առնչությամբ մեր դիտարկումներում, կանխատեսել էինք, որ բացահայտ հակասահմանադրական կարգավորումները անխուսափելիորեն հանգեցնելու են, այսպես կոչված, մասնագիտական կառույցի մենաշնորհի, ինչին հետևողականորեն փորձում էր հակադարձել Ֆինանսների նախարարությունը, հավաստիացնելով, որ անխուսափելիորեն կձևավորվեն առնվազն մի քանի, այսպես կոչված, մասնագիտական կառույցներ: Սակայն մեր կանխատեսումները, ցավոք, ամբողջովին իրականություն դարձան, ինչը հավաստվում է նաև հիշյալ գրություններում ձեր իսկ արձանագրմամբ. «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի համաձայն հավատարմագրված ***միակ մասնագիտացված կառույցը*** (ընդգծումը մերն է) Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատն է»: Անհասկանալի է, թե ի՞նչ հիմքով եք հանգել այն եզրակացության, որ իբր միակ մասնագիտացված կառույցի ձևավորումը եղել է «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի համաձայն. նկատենք, որ այդ օրենքով այդպիսի հեռանկար չի ամրագրվել, ուրիշ խնդիր, որ անհաջող կարգավորումների և կազմակերպչական անհեռանկար աշխատանքների արդյունքում, ինչպես արդեն նկատեցինք, դա հնարավոր է դարձել:

Ի դեպ, օրենքների հակասահմանադրականության դիմումների քննարկման գործընթացը դեռ չի ավարտվել, քանզի Սահմանադրական դատարանը ոչ թե գնահատել է դրանց սահմանադրականությունը, այլ այս փուլում գտնում է, որ դատարանը դեռևս չի անցել դրանց կիրառմամբ դատական ակտ կայացնելուն: Իսկ այն, որ այդ օրենքների կիրառումը բացահայտ իրողություն է, թերևս՝ վկայում է նաև ձեր հիշյալ գրությունների փաստը:

Այսպիսով, ակնկալում ենք, որ այսուհետ զերծ կմնաք օրենսդրության՝ սեփական ընկալմամբ պարզաբանումներից և կատեգորիկ հայտարարություններից, կհարգեք անհարկի միջամտություններից զերծ մնալու վերաբերյալ Վարչական դատարանի որոշումը և որևէ կազմակերպությանը չեք «հուշի», որ աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք ունեն ***միայն պալատի ռեեստրում***

գրանցված կազմակերպությունները, որոնց ցուցակը փոխանցում եք իրավաբանական անձանց: Միաժամանակ, ակնկալում ենք, որ լրացուցիչ ծանուցմամբ կիրազեկեք բոլոր այդ իրավաբանական անձանց, որ ձեր ծանուցում-պարզաբանումներից բնավ չի բխում, որ կասեցված է այն աուդիտորական կազմակերպությունների գործունեությունը, որոնք այս փուլում դատական կարգով վիճարկում են կոնկրետ իրենց գործունեությանը որևէ կերպ խոչընդոտող Ֆինանսների նախարարության վարչարարությունը, և որոնց գործունեությունը ոչ միայն կասեցված չէ, այլև Ֆինանսների նախարարությանը պարտավորեցրել են զերծ մնալ հիշյալ բնույթի ապօրինի միջամտություններից (Վարչական դատարանը որոշումը կայացրել է դեռևս 2021 թ. մարտի 17-ին):

Զգուշացնում ենք. մեր կազմակերպության իրավաչափ ու օրինական շահերին բացահայտ հակասող նույնաբնույթ գործունեությունը շարունակելու դեպքում, հարկադրված կլինենք սահմանված կարգով դիմել քրեական հետապնդում իրականացնելու իրավասություն ունեցող մարմիններին, իսկ պատճառված վնասի հատուցման պահանջը քննարկման առարկա կդարձնենք դատական կարգով:

«ԲԵՅՔԵՐ՝ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-Ի
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ **ՓԱՌԱՆՁԵՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО РЕСПУБЛИКА АРМЕНИЯ ЕРЕВАН CLOSED JOINT-STOCK COMPANY
02586575
«ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ»
"БЕЙКЕР ТИЛЛИ АРМЕНИЯ"
"BAKER TILLY ARMENIA"